«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՎ 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ

# ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2024-2029թթ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----------------------------------------------------------------------------------------------------2

1 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 1.1 Կրթական կարիքների նկարագրությունը.---------------------------------------------------------6
- 1.2 Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին----------------------------13
- 1.3. համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին----------------------------------------------------------15

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ,ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ՝ ձև 1

- ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ----------------------------------18
  - 2.1 նկարագրված են հաստատության շենքային պայմանները-------------------------------------21
  - 2.2 նկարագրված է հաստատության նյութատեխնիկական բազան.-------------------------------24
  - 2.3 նկարագրված են հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները՝ հաշվետու ժամանակաշրջանում
  - 2.4 ներկայացված են հաստատության կառավարման մարմինները--------------------------------30
  - 2.5 նկարագրված է հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների,խորհրդակցական մարմինների հետ. ----------32
  - 2.6 նկարագրված են մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները.---------------------------------------------------------------------------36
  - 2.7 նկարագրված է հաստատության տրամադրած կրթության որակը. ------------------------------41
  - 2.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը------46
  - 2.9 Բազմակարծիք ,ներառական , մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն.---------52
  - 2.10 Աշխատակազմի արժևորման ,խրախուսման ,ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը-----------------------------------------------------------------------------------------54

- 2.11 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց արդյունավետության ցուցանիշների , շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունկյունից------------------------57
- 2.12 ձևակերպված են հաստատությունում առկա հիմնախնդիրը(ները):


3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ Ձև 2


- Զարգացման ծրագրի նպատակը, խնդիրները---------------------------------------------------------------61
- Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները------------------------------------------------------------63
- Զարգացման ծրագրի ֆինանսական աղբյուրները-------------------------------------------------------63
- Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները և միջոցառումները------------------------------------------------------------------------------------------63
- Զարգացման ծրագրի կատարման չափանիշները
- Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը---------------------------------------------------------------63
- Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական բազան-------------------------------------------------------------------------------------63
- Արդյունքների գնահատման չափանիշներ-------------------------------------------------------------------85
- Գրականության ցանկ----------------------------------------------------------------------------------------91


ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2. Ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը ուսումնական հաստատությունում: Ծրագիրը կազմվում է 5 տարվա համար և ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

1) հաստատության գործունեությունը.

2) իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.

3) նպատակների և խնդիրների սահմանումը.

4) սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.

5) պատասխանատուները.

6) արդյունքների գնահատման չափանիշները.

7) ռիսկերը.

8) գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

## Դպրոցի առաքելությունը և տեսլականը

**Դպրոցի առաքելությունն է՝** սովորողներին նախապատրաստել սոցիալական հարմարվողականության և ինքնադրսևորման , ինքնաճանաչողության ժամանակակից աշխարհի արագ փոփոխվող պայմաններում՝ հաշվի առնելով նրանց առանձնահատկություններն ու հետաքրքրությունները , համամարդկային պահանջները:

**Դպրոցի տեսլականն է** ՝դպրոցը դարձնել խորը գիտելիքներով , գործնական հմտություններով , ստեղծագործ անհատ դաստիարակող դարբնոց:

**Դպրոցի գործունեությունը հիմնվելու է ՝**

- Կրթության մարդասիրական գաղափարների իրազեկման գործընթացի հիման վրա

- Սովորողների, ծնողների, դպրոցի միջև վստահության, հարգանքի փոխգործակցության
- Հոգեբանական բարձր հարմարավետություն մանկավարժական գործունեության արդյունքում
- Սովորողների և ուսուցիչների ստեղծագործական զարգացման համար ստեղծագործական ազատ մթնոլորտի
- Սովորողների համար կրթության և սոցիալական բնագավառում արագ հարմարվողականություն ապահովելու ցանկության
- Համայնքի ներգրավվածության
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և առցանց , ինչպես նաև համակցված ուսուցման կիրառմամբ
- Ներառական ուսումնական միջավայրի ստեղծմամբ
- Նպաստավոր և հարմարավետ, անվտանգ միջավայրի ապահովմամբ
- Խորհրդակցական մարմինների գործունեության խթանումով
- Օժտված սովորողների հետ աշխատելու և նրանց ու ուսուցիչներին ուղղված խրախուսական աշխատանքների կատարումով:
- Բնապահպանական աշխարհայացքի ձևավորմամբ
- Մասնագիտական կողմնորոշմանը ուղղված ծրագրերի իրականացմամբ:
- Կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհուրդի գործունեության արդյունավետ ու ի շահ սովորողի աշխատանքների վրա:
- Արժեքահեն դաստիարակության շեշտադրմամբ:

**Կրթական գործունեության արդյունքում** սովորողի ձեռք բերած գիտելիքները, արժեքները, հմտությունները , դիրքորոշումները կկազմեն կարողունակությունների կուռ համակարգ, որի շնորհիվ շրջանավարտը կունենա՝

- Ազատ հաղորդակցվելու կարողունակություն, կկարողանա արտահայտվել բանավոր և գրավոր գրագետ խոսքով, կունենա ստեղծագործ և քննադատական մտածողություն, բազմալեզու հաղորդակցության տիրապետաման հմտություն:
- Խնդիրների, առաջադրանքների լուծման եղանակներ նախագծելու հմտություն, կունենա բնագիտական տրամաբանական , քննադատական, ստեղծագործական մտածողություն :
- Իր դիրքորոշումը փաստարկելու և համոզելու վարպետություն
- Թվային տեխնոլոգիաներ կիրառելու հմտություններ:

- Գեղագիտական ճաշակ, կլինի ազգային և համամարդկային մշակույթին հաղորդակից, կունենա լայն մտահորիզոն, երևակայություն, հաղորդակից կլինի արվեստի և արհեստների տարբեր տեսակներին:
- Ինքնազարգանալու ցանկություն, առողջ ապրելակերպի ձգտում:
- Աշխատանքի արդյունքը գնահատելու հմտություն:
- Ինտելեկտուալ, մեղիագրագետ, ֆիզիկապես և հոգեպես առողջ անհատ:

1.Ուսումնական հաստատության գործունեությունը

**1.1 Կրթական կարիքների նկարագրությունը.**

(Կրթական կարիքները ներկայացված են համակողմանիորեն և ամբողջական : Տրված են բոլոր ուղղություններով / կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ,վարչատնտեսական գործունեություն:)

«ՀՀ Լոռու մարզի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը մշակելու համար հիմք եմ ընդունել ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները: Մշակումը իրականացնելու համար անհրաժեշտ է պատասխանել այն հարցերին, թե ինչու է սովորողին անհրաժեշտ կրթություն և ինչպիսի կրթություն է պետք: Պետք է նաև կատարել կրթական կարիքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի յուրացման ճիշտ գնահատում: Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ հանդիպումների ընթացքում քննարկումներ կատարելուց հետո, ուսումնասիրելով ուսումնական հաստատության ներքին գնահատման արդյունքները , ռազմավարական ծրագիրը կներկայացնեմ բոլոր տեսանկյուններից՝ կառավարման ուղղություն , ուսումնադաստիարակչական աշխատանքների ուղղություն և վարչատնտեսական գործունեության ուղղություն:

## Կառավարման ուղղություն՝

- **Փոխգործունակություն**- Տնօրենը դպրոցի ռազմավարական նպատակների իրականացման երաշխավորը և պատասխանատուն է: Իր համակարգված և համագործակցային աշխատանքի արդյունքում պետք է աշխատակազմին ուղղորդի ռազմավարական նպատակների իրականացմանը՝ աջակցելով առաջացող խնդիրների հաղթահարմանը: Անհրաժեշտ է, որ նա կարողանա թիմի ներսում ստեղծել համագործակցային մթնոլորտ: Պետք է աշխատակազմում

ապահովի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ և նպաստի աշխատակիցների միջև դրական միջանձնային հարաբերությունների ձևավորմանը:

- **Որոշումների կայացում**-Ղեկավարը կայացնում է որոշումներ առաջնահերթությունների վերաբերյալ, տալիս է խնդիրների լուծման հստակ քայլաշար: Անհրաժեշտ է , որ նա կարողանա հստակ սահմանել խնդիրները և որոշել դրանց հաղթահարման ուղիները: Տնօրենի որոշումները պետք է լինեն իրավական ակտերով հիմնավորված :
- **Պարտականությունների պատվիրակում, կազմակերպչական հմտություններ** Տնօրենը պետք է պաշտոնների նկարագրերին համապատասխան կազմակերպի աշխատանքի բաշխում՝ վերահսկելով աշխատանքների իրականացումը: Անհրաժեշտ է հսկողությունը կատարել աջակցության համատեքստում, քանի որ մանրախնդրությունը և չափից ավելի հսկողությունը երբեմն հանգեցնում են մոտիվացիայի վատթարացման :
- **Խնդիրներ լուծելու հմտություններ** – Ղեկավարը նախ պետք է կարողանա հասկանալ խնդրի բնույթը, ախտորոշել պատճառները և ապա նոր որոշում ընդունել, որը կտանի խնդրի լուծմանը:
  Դպրոցում անհրաժեշտ է ստեղծել համագործակցային մթնոլորտ՝ աջակցելով աշխատակիցներին և ստանալ նրանց վստահությունը:
- **Ծրագրերի կառավարում** - Կառավարչական գիտելիքների և կառավարչական հմտությունների տիրապետումը բարձր արդյունավետություն են ապահովում:
- **Ռեսուրսների արդյունավետ կառավարում**- Պետք է առաջնահերթ գնահատել ունեցած ռեսուրսները և դրանց ճիշտ տեղաբաշխումը: Իրատեսորեն գնահատել թիմի ծանրաբեռնվածությունը, կատարել ժամանակի և աշխատանքի ճիշտ հաշվարկ և բաշխում: Երբեմն սահմանափակ ռեսուրսների ճիշտ կառավարման արդյունքում հնարավոր է ստանալ ավելի մեծ արդյունք: Անհրաժեշտ է համակողմանիորեն զարգացնել ժամանակի և անձնակազմի ղեկավարումը՝ ապահովելով անխափան գործունեություն:
- **Մշտադիտարկման իրականացում**- Որոշումների կայացման ժամանակ պետք է հավաքագրել, վերլուծել, մեկնաբանել տվյալները: Անհրաժեշտ է տվյալների հավաքագրման վերլուծական կարողություն, որպեսզի գնահատվի սովորողների կրթական որակը, ուսուցիչների կրթական աշխատանքային կարիքները , բացահայտվեն բարելավելու անհրաժեշտություն ունեցող ոլորտները:
- **Ֆինանսական կառավարում**- Ֆինանսական միջոցների տնօրինումը և դրանց արդյունավետ օգտագործումը կառավարման համակարգում կարևոր և անհրաժեշտ հմտություններ պահանջող գործառույթներից է: Անհրաժեշտ է ղեկավարն ունենա ֆինանսական գրագիտություն:

- **Կրթական գործընթացի մասնակիցների ներգրավվածություն** - Ղեկավարը դպրոցի դերն ու կարևորությունը մեծացնելու , նաև աջակցություն ստանալու նպատակով պետք է կրթական գործընթացում ներգրավի համայնքի անդամներին, ծնողներին, աջակից այլ անձանց : Անհրաժեշտ է դրսևորել մարդկանց հետ շփվելու վարպետություն, լինել անկեղծ աջակից՝ անձանց , կրթական գործընթացի մեջ համայնքի ներգրավվածությունը մեծացնելու նպատակով:

  Դպրոցի կառավարման ընթացքում վերոնշյալ կարիքների լուծումը ապահովում է արդյունավետ կրթական միջավայր՝ սովորողների և աշխատողների համար:

### Ուսումնադաստիարակչական աշխատանքերի ուղղություն:

Դպրոցի ուսումնադաստիարակչական հետևյալ կարիքների լուծումը հանգեցնելու է զարգացնող և մոտիվացնող ուսուցման վերջնական արդյունքի:

**Ուսուցման և կրթության իրականացում, որը նպատակաուղղված կլինի ի շահ անհատի, հասարակության, պետության , ապահովելով առողջության պահպանությունը , նպաստավոր պայմաններ ստեղծել անհատի համակողմանի զարգացման համար , ներառյալ ինքնակրթության և լրացուցիչ կրթություն ստանալու համար:**

- **Կրթական գործընթացի պլանավորում `ուսումնական պլանի և ծրագրի մշակում.**
  Արդյունավետ դասավանդման համար և դասընթացի վերջնական նպատակին հասնելու, անհրաժեշտ վերջնարդյունքը ապահովելու համար ուսուցիչները և մյուս մանկավարժ աշխատողները պետք է հստակ մշակված ծրագիր և պլան ունենան: Դրա համար պետք է զարգացնել նախագծման, պլանավորման, նախապատրաստական մոդելավորման քայլերին տիրապետելու հմտություններ:
- **Կրթական գործընթացի մեթոդների և կրթական տեխնոլոգիաների կիրառում և կատարելագործում, ներառյալ հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը:**
  Վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ կրթության անընդհատությունը և անխափան կազմակերպումը պահանջում են նաև ՏՀՏ օգտագործման առաջնահերթություն: Այսօրվա ուսուցիչը պետք է լինի անընդհատ զարգացող, տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և կարողանա օգտագործել էլեկտրոնային հարթակներում առկա անսպառ ռեսուրսները՝ իր դասերը ավելի բովանդակային և հետաքրքիր դարձնելու համար: Արդի կրթությունը պահանջում է

կրթական նոր մեթոդներ , տեխնոլոգիաներ, ՏՀՏ միջոցներ , ինտերակտիվ դասավանդման մոդելներ: Դրա համար ուսուցչից պահանջվում է լինել անընդհատ զարգացողոող , սովորողներին մոտիվացնող, ինակրթությամբ զբաղվող և նորարար՝ կրթական գործընթացի մեջ :

- **Մասնագիտական , առարկայական զարգացում**

  Նոր կամ բարելավվող հմտությունների , գիտելիքների ձեռքբերումը , մշտական որոնումները, մասնագիտական նորարարություններին հետևելը շարժիչ ուժ են մասնագիտական աճի համար: Դրա համար պետք է ուշադրություն դարձնել ինքնակրթությանը, շարունակական վերապատրաստումների, սեմինարների մասնակցությանը, ժամանակի ճիշտ տնօրինմանը:

- **Ներառականության ապահովում**
- Ներառական կրթությունը ապահովում է կրթության հավասար հասանելիություն բոլոր սովորողների համար՝ հաշվի առնելով կրթության առանձնահատուկ կարիքների և անհատական կարողությունների բազմազանությունը: **Հայտնաբերել սոցիալապես վատ և վտանգավոր իրավիճակում գտնվող անչափահասներին**

  Սովորողների նկատմամբ մշտական վերահսկողությունը , ընտանիքի մասին տեղեկացված լինելը կարևոր գործառույթներից է: Դրա համար դպրոց-ընտանիք կապը պետք է դարձնել նպատակային և հետևողական: Անհրաժեշտ է ժամանակին հայտնաբերել և աջակցել կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին՝ համագործակցելով այդ խնդրող զբաղվող տարածքային մարմինների հետ:

- **Ապահովել սովորողների զբաղվածությունը ըստ կարիքների , ըստ հետաքրքրությունների**

  Խմբակների միջոցով դպրոցականները ոչ միայն հետաքրքիր ձևով տնօրինում են ազատ ժամանակը, այլև զարգացնում են ֆիզիկական , մտավոր, ստեղծագործական կարողությունները, մեդիագրագիտությունը: Երկարօրյա խմբերի հետ աշխատանքը նաև ընտանիքին օգնելու, սովորողի կրթական կարիքները բարելավելու նպատակ ունեն: Անհրաժեշտ է վարպետորեն կազմել ծրագրերը և իրականացնել բարձր որակով:

- **Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովում**

  Լաբորատորիաների հագեցվածությունը, սարքավորումների, նյութերի և կրթական միջավայրի, պայմանների առկայությունը կրթական գործընթացի կազմակերպման կարևոր բաղադրիչներից են: Պետք է սիստեմատիկ հսկողություն սահմանել նյութատեխնիկական բազայի հագեցվածության և արդյունավետ կիրառության նկատմամբ: Յուրաքանչյուր տարվա բյուջեի նախահաշվով սահմանել նաև որոշակի միջոցներ՝ լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերման համար:

- **Դպրոցում կրթության որակի ներքին մոնիտորինգի** համակարգի գործունեության ապահովում արդյունավետության և սահմանված վերջնարդյունքների ապահովման նկատմամբ: Դրա համար անհրաժեշտ է կիրառել վերահսկողության բոլոր գործիքները:
- **Համացանցում դպրոցի պաշտոնական կայք էջի վարում**
  Թափանցիկ ու ազատ, տեսանելի աշխատելու ինչպես նաև հասարակայնության հետ կապի ապահովման համար լավագույն միջոցներից է պաշտոնական էջի վարումը:

## Վարչատնտեեսական աշխատանքների ուղղություն

**Ուսումնական գործունեության երրորդ բնագավառը վարչատնտեսական գործունեությունն է: Որի նշված կարիքների լուծումը կբերի ուսումնական հաստատության արդյունավետ ու վերընթաց զարգացման:**

- **Ֆինանսական կառավարում-դրամաշնորհ, գնումներ և պայմանագրեր**
  Ֆինանսական կառավարման նպատակն է դպրոցի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումը , կրթական նպատակով տարբեր ծրագրերի ձեռքբերումը: Ճիշտ և լավ կառավարումը կապահովի հաշվետվողականություն և արդյունավետություն ռեսուրսների օգտագործման ժամանակ, կապահովի ֆինանսական կայունություն: Գնումների գործընթացի հմտորեն իրականացումը կապահովի որակյալ ծառայություններ և լավագույն արժեքով անհրաժեշտ ռեսուրսներ: Անհրաժեշտ է դրամաշնորհայիին ծրագրեր գրելու գրագիտություն, ֆինանսական լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու համար:
- **Ռիսկերի կառավարում**
  Անհրաժեշտ է ունենալ դպրոցում ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գնահատման ու մշակման մեթոդների՝ (մերժման, նվազեցման, կանխարգելման և այլն) ու գործիքների իմացություն (օր. Տնտեսելու, մոնիտորինգի, վերահսկողության), խնդրահարույց ոլորտները բացահայտելու, վերլուծելու և ունենալու ապահով ու անվտանգ միջավայր , պայմաններ ՝ սովորողների և աշխատողների համար:
- **Հաստատության նյութատեխնիկական և տնտեսական բազայի ամրապնդում**
  Նոր ժամանակների կրթությունը պահանջում է հզոր և արդիական նյութատեխնիկական բազա : Պետք է նպաստել սովորողի գիտատեխնիկական ներուժի իրացմանը :

- **Սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում**
  Անհրաժեշտ է դպրոցում ապահովել սովորողի և աշխատողի կյանքի, հոգեկան ու ֆիզիկական առողջության , առողջ ապրելակերպի խթանման համար բոլոր պայմանները, թե ուսումնական, և թե կրթական կազմակերպչական գործընթացում:
- **Տեխնիկական, էլեկտրական և հրդեհային անվտանգության պայմանների ապահովման և պահպանման համար**
  Անհրաժեշտ է կանխարգելման և արդյունավետ անվտանգության ապահովման միջոցառումների համակարգի ներդրում և տիրապետում:
- **Ջրամատակարարման և կոյուղու անխափան գործարկման ապահովում**
  Համակարգի անխափան գործունեության համար պետք է ժամանակին կանխարգելիչ աշխատանքները, պատշաճ սպասարկումը , գործող աշխատակազմի որակավորումը, մոնիտորինգը:
- **Նյութական ակտիվների գույքագրում**
  Տարեկան հաշվետվությունների տեսքով պետք է իրականացվի նյութական ակտիվների գույքագրում ըստ համապատասխան կարգի:
- **Շենքի ու շինությունների ընթացիկ վերանորոգում**
  Մշտապես ապահով, սանիտարահիգիենիկ պահանջներ ապահովելու համար դպրոցում պետք է կատարվեն ընթացիկ վերանորոգումներ ըստ անհրաժեշտության:
- **Իրավական համապատասխանության ապահովում**
  Ուսումնական հաստատության վարչատնտեսական համակարգման համար կարևոր գործոն է գործող օրենսդրության պահանջները անվերապահորեն կատարելը:

## 1.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի , շահառու բոլոր խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

( Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին , համայնքի , շահառու բոլոր խմբերի կարիքներին ու հնարավորություններին: )

«ՀՀ Լոռու մարզի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ը ուսումնական գործունեությունը իրականացնում է համաձայն ՀՀ օրենսդրության, դպրոցի կանոնադրության , Հանրակրթական Պետական Չափորոշչի Դպրոցը համապատասխանում է պետական կրթական քաղաքականության միտումներին , համայնքի , շահառու բոլոր խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

**Համապատասխանեցումը կատարվում է հետևյալ գործոններով՝**

1. **Ուսումնական ծրագիրը և գնահատման ներկայիս հայեցակարգը համապատասխանում է ՀՊՉ-ի պահանջներին և կրթական քաղաքականությանը:** Հաշվի է առնվում համայնքի կարիքները՝ անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները ապահովելու համար: Շահառուները սովորողներն են՝ համայնքի ապագան կերտողները:
2. **Կրթության մեջ ընդգծվում է մարդասիրությունը , իրականացվում է ներառական կրթություն, հաշվի է առնվում սովորողների կրթական կարիքներն ու ֆիզիկական հնարավորությունները:** Շահառուները բոլոր սովորող երեխաներն են, կրթական , մշակութային և համայնքային կյանքին մասնակցության հավասար պայմանների ակնկալիքով:
3. **Համընդհանուր մարդկային արժեքների առաջնահերթությունը**: Դպրոցի կրթական գործընթացում բարոյահոգեբանական արժեքները առաջնային են : Կյանքը, արժանապատվությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները, փոխօգնությունը, փոխադարձ հարգանքը, ստեղծագործական աշխատանքը, առողջ ապրելակերպը, բարձր բարոյական կերպարները, ամուր ընտանիքը և այլ արժեքներ դրված են սովորողների դաստիարակության և կրթության հիմքում: Շահառուները սովորողներն են:

4. **ՏՀՏ ինտեգրում:** ՏՀՏ միջոցները կրթական ռազմավարության հիմքերից են : Դպրոցում ստացած գիտելիքների և հմտությունների միջոցով լուծվում են համայնքում առկա ՏՀՏ կարիքները : Շահառուները՝ համայնքի անդամ սովորողներն ու մանկավարժներն են :
5. **Հարգանքը մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ, մասնագիտական կողմնորոշման ծրագրեր**: Կրթական ծրագրերը , ՀՊՉ-ի արդյունավետ ներդրումը, ուսումնական պլանները համապատասխանեցվում են համայնքի, պետության համար մասնագիտական բանկ ապահովելուն, և ժամանակակից աշխարհում կենսունակ ու հաջողակ անհատի ձևավորման համար, ապահովում են սովորողի իրավունքների և ազատությունների դրսևորման պայմանները:

6. **Բնապահպանական խնդիրներ**: Դպրոցը ապահովում է բնության պահպանության , շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկված, օբյեկտիվ մտածելակերպով ուբնապահպանական խնդիրների լուծման կարողություններով հասարակություն: Շահառուները սովորողներն են , իրենց համայնքի բնապահպանական խնդիրների ու լուծման վերաբերյալ տեղեկատվությամբ:
7. **Ազգային և համամարդկային արժեքների յուրացումն ու պահպանումը**: Դպրոցում ձևավորվում են սովորողների մեջ ազգային, համամարդկային արժեքների նկատմամբ գիտական և համապարփակ պատկերացումներ: Պետական քաղաքականության շնորհիվ, դպրոցի , նաև համայնքի կրթական ու մշակութային կյանքը համապատասխանեցվում է ազգային և համամարդկային արժեքների յուրացմանն ու պահպանմանը, ապահովելով մշակութային բարձր մասնակցություն:
8. **Կրթության կառավարման ժողովրդական , պետական –հասարակական բնույթը, դպրոցի ինքնավարություն-համայնքի, ծնողների ներգրավվածությունը որոշումներ կայացնելու մեջ**: Դպրոցի կրթության կառավարման գործընթացում կարևոր են ՝ ծնողների, համայնքի , խորհրդակցական մարմինների դերը: Ժողովրդավար և մասնակցային կառավարումը արդյունավետ է կրթական գործունեության մեջ: Շահառու խմբերն են ծնողները, խորհրդակցական մարմինները, համայնքի ներկայացուցիչները:

## 1.3. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների (դահլիճներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, առարկայական կաբինետներ, ճաշարան, բուժկետ և այլն), հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.

( Ամբողջովին համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և ներուժին:)

**Կներկայացնեմ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի ենթակառուցվածքների զարգացման ուղիները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները՝**

- Թվային տեխնոլոգիաների կիրառում , ինտերնետ կապի առկայություն

Դպրոցում թվային տեխնոլոգիաների օպտիմալ ներդրումը կառավարչական, մանկավարժ աշխատողների մասնագիտական զարգացման և ուսումնառության գործընթացում, ապահովում են մասնագիտական աճ , տեխնոլոգիաներին տիրապետելու վարպետության բարձրացում: Անընդհատ զարգացման և գիտատեխնիկական նորացման պայմաններում դպրոցը պետք է մեծացնի ռեսուրսային և ներդրումային հնարավորությունները:

- **Քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության , աշխարհագրության լաբորատոր ենթակառուցվածքներ, արհեստանոց**

Դպրոցը կարիք ունի համալրելու անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով: Կիրառվում են նաև վիրտուալ լաբորատորիաների հնարավորությունները: Մասնագետ լաբորանտների, տեխնոլոգիայի ուսուցչի մասնագիական աճի ու արդյունավետության բարձրացման նպատակով պետք է ապահովել սեմինարների և վերապատրաստումների մասնակցության հնարավորությունը:

- **Մարզադահլիճ, համալիր մարզագույք**

Դպրոցը չունի մարզադահլիճ: Որպեսզի ֆիզկուլտուրայի դասերը անցկացվեն պահանջներին համապատասխան, անհրաժեշտ է մարզագույք, պարագաներ և տարածք: Պետք է խրախուսել ֆիզկուլտուրայի ուսուցչի բարձր մասնագիտական կարողությունները, ով արդի իրավիճակում դասերը դարձնում է հնարավոր: Նպաստել, որ հոգեբանի , ՆԶՊ և այլ մասնագետների հետ համագործակցելով ապահովվի առողջ ապրելակերպի, սովորողների մոտ կամային դրսևորումների զարգացման, ֆիզիկական ուժի խթանման, ներդպրոցական ռազմամարզական միջոցառումների կազմակերպման ու իրականացման մթնոլորտ :

- **Ճաշարան**

Դպրոցում գործում է ճաշարան,որտեղ ապահովված են սանիտարահիգիենիկ, գործառույթին համապատասխան պայմաններ: Աշխատող անձնակազմի համար ստեղծված են համապատասխան մասնագետների հետ սննդի ու պատրաստման հետ կապված խորհրդատվություններ ստանալու հնարավորություններ:

- **Հանդիսությունների դահլիճ**

Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ: Դասասենյակներում և միջանցքում միջոցառումներ իրականացնելու համար դպրոցը կարիք ունի համալրելու միջոցառումների համար պահանջվող տեխնիկայով:

- **Գրադարան**

Դպրոցի նպատակներն ու դպրոցական գրադարանի նպատակները փոխկապակցված են: Պահպանվում և օգտագործվում են գրադարանային ու տեղեկատվական ռեսուրսների ֆոնդը: Պետք է կազմակերպել և վարել էլեկտրոնային օրագիր: Սովորողներին և մանկավարժ աշխատողների համար ապահովել անհրաժեշտ մեթոդական գրականություն, տեղեկատվական ռեսուրսներ, նաև հիբրիդ ռեսուրսներ ինքնակրթության ու մասնագիտական աճի համար: Անհրաժեշտության դեպքում օգտվել նաև համայնքային ենթակայության գրադարաններից :

- **Հարմարեցված միջավայր-**
- **Դպրոցում առկա են հարմարեցումներ** `թեքահարթակներ, հատուկ ճաղավանդակներ, բազրիքներ, որոնք ապահովում են տեղաշարժման մատչելիություն, կրթական հասանելիություն:
- **Բուժսպասարկման ենթակառուցվածք**

Դպրոցում առկա է բուժական սենյակ, որը վերանորոգված է և գտնվում է սանիտարական բավարար վիճակում : Այն կահավորված է առաջին անհրաժեշտության պարագաներով: Կարիքը՝ ապահովել բուժսպասարկող որակավորված անձնակազմի սպասարկումը և աշխատանքը, համագործակցելով համայնքային ենթակայության բուժական հաստատությունների հետ:

**Պարբերաբար անդրադարձը հնարավորությունների , մարդկային ռեսուրսների համապատասխանեցմանը և ենթակառուցվածքների հնարավորություններին՝ կապահովի արդյունավետ աշխատանք:**

## 2 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ՀՀ **«Լոռու մարզի  Վանաձորի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը »** հիմնադրվել է 1953 թ.-ին : 1999թ կառուցվել է նոր, ոչ տիպային շենք՝ նախատեսված 197 սովորողների համար: 2003թ.-ին կատարվել է անվանափոխություն՝ ՀՀ Լոռու մարզի « Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց » ՊՈԱԿ:

Պետ. Ռեգիստր N 26.210.02084 , տրված 22.01.2003

Հանրակրթական ուսումնական հաստատության հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր Զորավար Անդրանիկի փողոց, 71 շենք:

Հանրակրթական ուսումնական հաստատության էլեկտրոնային փոստի հասցեն՝vanadzor9dproc@mail.ru

Հանրակրթական ուսումնական հաստատության  տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի՝ **հիմնական:** Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝ **տարրական՝ (1-4 ), հիմնական (5-9 ):**

Դպրոցի ռազմավարական պլանավորման մեջ կարևոր է իրականացնել վերլուծություն՝ գնահատել  ուժեղ և թույլ կողմերը , նաև հնարավորությունները ու սպառնալիքները (ռիսկերը ):

**Դպրոցի ուժեղ կողմերը՝**

- **Ուսուցիչներ**, ովքեր պատրաստ են աշխատել կրթական ժամանակակից պահանջներին համապատասխան, ապահովելով սովորողների կրթությունն ու դաստիարակությունը ՀՊՉ –ի պահանջների համաձայն:
- **Մասնակցային կառավարման առկայություն**: Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների ներուժի օգտագործում
- **Դպրոց-ծնող – համայնք կապի առկայություն**
- **Արտադասարանական և արտադպրոցական ծրագրերի հագեցվածություն**
- **Գնահատման և արժևորման բարձր կուլտուրա**
- **Նյութատեխնիկական բազա**

**Դպրոցի թույլ կողմերը՝**

- Վարչական անձնակազմի կարողությունների (գիտելիքներ և հմտություն ներ )զարգացման անհրաժեշտություն
- Կրթական նպաստավոր ֆիզիկական պայմանների անհրաժեշտություն
- ՏՀՏ ռեսուրսների օպտիմալ կիրառում, նաև անհրաժեշտության դեպքում արդյունավետ հեռավար դասերի վարում: Տեխնոլոգիաների և գործիքների անհավասարաչափ տիրապետման հասանելիություն:
- Ինտերակտիվ մեթոդների ոչ բավարար մակարդակ
- Կամավոր ատեստավորման մասնակցության ցածր մակարդակ
- Սովորողների շրջանում մոտիվացիայի ցածր մակարդակը
- Ուսուցիչների ակտիվության պակասը նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպման մեջ
- Տարակարգ ստացած ուսուցիչների ցածր մակարդակ՝ մեկ ուսուցիչ
- Ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցության ցածր մակարդակ՝ մեկ ուսուցիչ
- Դպրոց-ծնող-համայնք փոխգործակցության արդյունավետության պակաս
- ՏՀՏ միջոցների մշտական արդիականացման և թարմացման անհրաժեշտություն
- Մարզադահլիճի բացակայություն
- Հանդիսությունների դահլիճի բացակայություն

**Դպրոցի հնարավորությունները**

- Նոր ՀՊՉ ներդրումը կապահովի ֆինանսական միջոցների և կրթական պահանջների միջև համապատասխանություն
- Դրամաշնորհային ծրագրերի մասնակցության հնարավորություն, արտաբյուջետային հնարավորություններ
- Հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման գործունեություն
- Դպրոց-ծնող- համայնք փոխգործակցության արդյունավետության բարձրացում
- Վարչական և մանկավարժական անձնակազմի մասնագիտական աճ, վերապատրաստումների, սեմինարների, գիտական կոնֆերանսների մասնակցության և ինքնակրթության միջոցով
- ՏՀՏ ռեսուրսների մշտապես մոդեռնացման հնարավորություն

- Օլիմպիադաների և ներդպրոցական մրցույթների նախապատրաստվելու հնարավորություն
- Արտադասարանական և արտադպրոցական նպատակային զբաղվածությունը կազմակերպելու հնարավորություն
- Սովորողներին մշակութային ու արժեքային կյանքին հաղորդակից լինելու հնարավորություն

**Դպրոցի ՝ սպառնալիքները (ռիսկերը )**

- Սովորողների բարձր ծանրաբեռնվածություն:
- Սովորողների ընտանեկան անվերահսկելի բացասական ռիսկերը:
- Սովորողների սովորելու ցանկության բացակայությունը, մոտիվացիայի անարդյունավետությունը:
- Ուսուցիչների մոտ անտարբերության առաջացումը:
- Կրթական ծառայությունների պահանջարկի նվազում ՝ պայմանավորված սովորողների կարիքի ու ճաշակի փոփոխությամբ
- Արտաբյուջետային հատկացումների սակավություն:
- Նյութատեխնիկական բազայի մոդեռնացման անհնարինություն:
- Նոր կառուցվող մարզադահլիճի շինարարական աշխատանքների դադարեցում:

Դպրոցի ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, նաև հնարավորությունների ու սպառնալիքների գնահատումը կապահովի դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետությունը:

## 2.1 ա. ՈՒսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը

( Վերլուծությունը ամբողջական է , համակողմանի և ընդգրկում է շենքային պայմանների բոլոր պարամետրերը, ներկայացված են թվային տվյալները , կարիքի գնահատման հիմնավորումները:)

Ուսումնական հաստատությունը համապատասխանում է իր նախագծային հզորությանը: Սովորողների թիվը համապատասխանում է ՀՀ կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն պահանջներին և ուսումնական հաստատության լիցենզիայով սահմանված նորմերին: Դպրոցում սովորում են 183 սովորողներ , 88 աղջիկ և 95 տղա:

Դիտարկումը կատարվել է 2022 թ

**Աղյուսակ 1 .** ՌԽսումնական հաստատությունը երկհարկանի է.

| **Առաջին հարկ**<br>**Տարածքի անվանումը** | **Չափը ՝ մ²** | **Երկրորդ հարկ**<br>**Տարածքի անվանումը** | **Չափը ՝ մ²** |
|---|---|---|---|
| Ռեսուրս կենտրոն | 22 | Ուսուցչանոց | 36 |
| Բուժկետ | 8 | Տնօրենի աշխատասենյակ | 36 |
| Դասասենյակ 1 | 36 | Ընդունարան | 8 |
| Դասասենյակ 2 | 36 | Լաբորատորիա | 30 |
| Դասասենյակ 3 | 36 | Գրադարան | 38 |
| Դասասենյակ 4 | 36 | Կերպարվեստի սենյակ | 22 |
| Դասասենյակ 5 | 36 | Արմաթ լաբորատորիա | 36 |
| Դասասենյակ 7 | 36 | Համակարգչային սենյակ | 36 |
| Ճաշարան | 36 | Դասարան 6 | 36 |
| Խոհանոց | 36 | Դասարան 8 | 36 |
| Կաթսայատուն | 6 | Դասարան 9 | 36 |
| Սանհանգույց 1 ,2,3 | 35,9 միասին | ՆԶՊ-ի դասասենյակ | 22 |
| Հաշվապահի սենյակ | 12 | Զենքի պահեստ | 8 |
| Էլեկտրականության սենյակ | 6 | Սանհանգույց 1 և 2,3 | 12,6+12,6 |

Աղյուսակ 2 Տվյալներ դասասենյակներում սեղան- նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

| Դասասենյակ | Մակերեսը մ² | Սեղան-նստարանների դաս. Ձևը | Սեղան-նստարանների թիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռ. |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ 1 | 36 | Շարքերով | 15 մեկտեղանոց | 0,6 |
| Դասասենյակ 2 | 36 | Շարքերով | 19 երկտեղանոց | 0,6 |
| Դասասենյակ 3 | 36 | Շարքերով | 6 երկտեղանոց | 0,7 |
| Դասասենյակ 4 | 36 | Շարքերով | 9 երկտեղանոց | 0,6 |
| Դասասենյակ 5 | 36 | Շարքերով | 8 երկտեղանոց | 0,6 |
| Դասասենյակ 6 | 36 | Շարքերով | 8 երկտեղանոց | 0,6 |
| Դասասենյակ 7 | 36 | Շարքերով | 10 երկտեղանոց | 0,5 |
| Դասասենյակ 8 | 36 | Շարքերով | 10 երկտեղանոց | 0,5 |
| Դասասենյակ 9 | 36 | Շարքերով | 9 երկտեղանոց | 0,6 |

Աղյուսակ3 Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ

| Դասասենյակ | Մակերեսը մ² | Մեկ սովորողին ընկնող մակերեսը մ² |
|---|---|---|
| Դասասենյակ 1 | 36 | 2,4 |
| Դասասենյակ 2 | 36 | 1,8 |
| Դասասենյակ 3 | 36 | 1,5 |
| Դասասենյակ 4 | 36 | 2 |
| Դասասենյակ 5 | 36 | 3,6 |
| Դասասենյակ 6 | 36 | 1,1 |
| Դասասենյակ 7 | 36 | 1,3 |
| Դասասենյակ 8 | 36 | 1,7 |
| Դասասենյակ 9 | 36 | 1,6 |

**2.2 Ներկայացվում է դպրոցի նյութատեխնիկական բազայի, ենթակառուցվածքների վերլուծությունը՝ ընթացիկ ուժեղ կողմերն ու կարիքներ**

**Աղյուսակ՝4 Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների ,կաբինետների , դահլիճների մասին.**

| | | | |
|---|---|---|---|
| Լաբորատորիաներ կաբինետներ դահլիճներ | Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները | Ուսումնանյութական, դիդակտիկ նյութեր | Լրացուցիչ գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը |
| Ֆիզիկայի լաբորատորիա, Կաբինետ | ԷԼեկտրական մեք., ուժաչափ | Պաստառներ, Դասագրքեր | նոր չափիչ սառքեր |
| Քիմիայի լաբորատորիա, Կաբինետ | Փորձանոթներ, կոլբա, սպիրտայրոց | Պարբերական համակարգ | Լվացարան, հայտանյութեր, ալկալիներ, թթուներ |
| Կենսաբանության լաբորատորիա, Կաբինետ | Հերբարիում, կենդ. և մարդու օրգանների մոդելներ | պաստառներ էլ.դասեր | |
| Աշխարհագրության լաբորատորիա , կաբինետ | | | Համակարգիչ,պրոեկտոր, Քարտեզներ |
| Պատմության կաբինետ | | Քարտեզներ, պաստառներ | |
| Ռազմագիտության կաբինետ | | ուսումնական զենք, զինամթերք | լրացուցիչ զենք |
| Համակարգչային լաբորատորիա, կաբինետ | | 9 համակարգիչ 1 տպիչ սարք | Էլ. գրատախտակ. պրոեկտոր, սկաներ, համակարգիչներ |
| Օտար լեզուների | | Այբբենարան | |

| | | | |
|---|---|---|---|
| լինգաֆոնային կաբինետ | | Պաստառներ | |
| Արհեստանոց Միջոցառումների դահլիճ | | - | - |

**Ներկայացվում է դպրոցի նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը՝**

- **Ուժեղ կողմ-Ժամանակակից կրթական հարմարություններ**
- Դպրոցի շենքը կառուցվել է երկրաշարժից հետո ՝ 1999 թ.:
- Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:
- Դպրոցն ունի լուսավոր դասասենյակներ, դասասենյակներում նստարանների թիվը **մասնակի** համապատասխանում է ՀՀ կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին, հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար առկա են անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններ
- ՏՀՏ միջոցների առկայություն-կահավորված դասասենյակ, , 9 համակարգիչների , 1 տպիչ սարքի առկայություն .ինտերնետ կապի առկայություն:
- Գրադարանում համացանցին միացված 1 համակարգչի առկայություն , 14 նստատեղով ընթերցասրահի , 2530 գեղարվեստական գրքերի , 131 տեղեկատվական գրքերի, 44 ուսումնամեթոդական գրքերի, 110 ամսագրերի առկայություն:
- Մասնակի վերանորոգված ուսումնական շենք, որը համապատասխանում է շահագործման անվտանգային պահանջներին:
- Առկա են դեպի դուրս բացվող 5 ելքեր, թեքահարթակներ, լայն դռներ , հարմարեցված սանհանգույցներ :
- Առկա են կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ Լավ կահավորված բուժկետ առողջապահական ծառայություններով:
- Բարեկարգ ճաշարան, անհրաժեշտ պարագաներով համալրված խոհանոցի առկայություն:

- 2 սանհանգույցների հարմարեցված և վերանորոգված վիճակ:
- ՌԻսւմնական հաստատությունը ձմեռային ամիսներին տաքացվում է լոկալ ջեռուցման համակարգով:
- Ուսումնական հաստատությունը ապահովված է ամենօրյա ջրամատակարարումով:

**Թույլ կողմ՝**

- Ուսումնական հաստատության շենքը ոչ տիպային է:
- Ուսումնանյութական բազան կարիք ունի վերազինման, թարմացման:
- ՏՀՏ միջոցների և տեխնիկայի հնացած վիճակ և համակարգչային տեխնիկայի սակավություն
- Դպրոցն ունի ժամանակակից գրականության , ուսումնամեթոդական գրականության կարիք:
- Սպորտդահլիճի բացակայություն:
- Սանհանգույցներում կարիք կա ապահովել հոսող ջրի առկայություն:
- Սանհանգույցներից չորսը կարիք ունեն հարմարեցման և վերանորոգման:
- Ձմռանը ԱՆ սահմանած ջերմաստիճանային ռեժիմը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ տաքացուցիչների ավելացում:
- ԱՆ հաստատած ցանկով տրամադրված դեղորայքի նորացման, համալրան կարիք, բուժաշխատողի քիչ աշխատաժամանակ (0,25 դրույք):
- Առարկայական դասասենյակների, շախմատի սենյակի անհրաժեշտություն:

**Աղյուսակ 5**

**Ներկայացվում է նյութատեխնիկական բազայի վերլուծության հիման վրա գործողություններն 2024-2029թթ ժամանակահատվածում**

| Ենթա Կառուցվածքը | Նպատակը և խնդիրները | Գործողություններ | պատասխանատուներ |
|---|---|---|---|
| ՆԶՊ կաբինետ | Ստեղծել նյութատեխնի կական հագեցած կաբինետ Ներգրավել շահագրգիռ կողմերի | Հարստացնել ուսումնական նյութերով | Դպրոցի տնօրեն, վարչատնտեսական համակարգող, զինղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| Ռիսումնական լաբորատորիաներ | Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան լաբորատորիաների ստեղծում Բնագիտական առարկաների դասերը դարձնել արդյունավետ | Լրացնել անհրաժեշտ նյութերի տեսականին և քանակը, հետևողական լինել դրանց տեղին օգտագործմանը | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ուսուցիչ, լաբորանտ |
| Մարզագույք | Դպրոցը համալրել մարզագույքով | Նպաստել արդյունավետ և անվտանգ պարապմունքների իրականացմանը: Նորացնել և համալրել անհրաժեշտ մարզագույքով | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ուսուցիչ, բուժքույր |
| ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցումներ | Բավարարել սովորողների կրթական կարիքները ստեղծել համապատասխան միջավայր | Ներառական կրթության համար անհրաժեշտ սարքավորումներ և գույք | Տնօրեն,վարչատնտեսակա ն համակարգող, ուսուցիչ |
| Բուժսպասարկման սենյակ | Բուժսենյակը և բուժ սպասարկումը դարձնել ԱՆ պահանջներին համապատասխան | Համալրել անհրաժեշտ , ԱՆ սահմանած ցանկով դեղորայքով, բուժաշխատողի աշխատանքային ժամերի վերանայում | Տնօրեն.համակարգող, բուժքույր, ուսուցիչ |
| Գրադարան | Ժամանակակից պահանջների ապահովում կրթական նպատակով | Ստեղծել մեդիագրադարան, որը հարուստ կլինի ուսումնական, գիտահանրամատչելի , տեղեկատու, դիդակտիկ և այլ ռեսուրսներով Համալրել | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, գրադարանավար, ուսուցիչ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | անհրաժեշտ գրականությամբ, էլեկտրոնային ռեսուրսներով և աշխատանքային պայմաններով | |
| Համակարգչային Լաբորատորիա | Որպես վերահսկողության , ուղղման , թեստավորման, ախտորոշման գործընթացների ավտոմատացման միջոց: Ուսումնական անբաժանելի միջոց: | Համակարգչային տեխնիկայի նորացում և հագեցում | Տնօրեն,վարչատնտեսական համակարգող, |

**Դպրոցի նյութատեխնիկական բազայի, ենթակառուցվածքների վերլուծությունը ցույց է տալիս** , որ ռիսկերը վերաբերում են հնացած տեխնոլոգիաներին, սպասարկման անբավարար միջոցներին, մասնագիտական կարիքներին , ֆինանսական միջոցների անբավարար լինելուն և իրավիճակային հնարավոր փոփոխություններին, ինչը պետք է մեղմել ճիշտ պլանավորմամբ, նախաձեռնողական մոտեցմամբ, արտաբյուջետային միջոցների հայթայթմամբ, տեխնիկական շարունակական արդիականացմամբ ու նորացմամբ:

## 2.4 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

(Համագործակցության նկարագրությունը ամբողջական է, ներառում է համագործակցության ամբողջական ռազմավարությունը առանձին ուղղություններով , բոլոր կողմերով )

**Կներկայացվի հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն:**

**Համագործակցության հիմնական ռազմավարական նպատակները՝**

- Կրթության որակի բարձրացում
- Սովորողների ուսուցման պայմանների բարելավում
- Ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարելավում
- Հաստատության ռեսուրսների բազայի ընդլայնում
- Որոշումների կայացում
- Հաղորդակցության և համայնքի հարաբերությունների կազմակերպման մեխանիզմներ

Ներկայացնում եմ կառավարման մարմնի և ուսումնական հաստատության համագործակցության ուժեղ և թույլ կողմերը, ռազմավարական նպատակների իրականացման գործում:

- **Ուժեղ կողմ՝** դպրոցի զարգացման համատեղ ռազմավարության որոշման և իրականացման գործընթացը ընդհանուր նպատակների համատեքստում է:
  **Թույլ կողմ** համարվում է համագործակցությունը տեղական կառավարման մարմինների հետ:
- **Ուժեղ կողմ** -Դպրոցի ներքին և արտաքին փոխգործակցությունը, հաղորդակցությունը , տեղեկատվության փոխանակման գործառույթը կառուցողական մակարդակում է: Հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների գործունեությունը կատարվում է ըստ բնագավառի՝ հայրենասիրական, ճանաչողական , ժամանցային, աշխատանքային, ըստ տևողության՝ մշտական,ժամանակավոր և իրավիճակային:
  **Թույլ կողմեր**-Արհեստածին և չնախատեսված օբյեկտիվ կամ սուբյեկտիվ խանգարող պայմանները կարող են խաթարել հաղորդակցական , փոխգործակցության արդյունավետ մշակույթը:

- **Ուժեղ կողմ-** Դպրոցի գործունեության պլանավորումը դպրոցի տնօրենի ու կառավարման մարմնի համագործակցությամբ է իրագործվում:
- **Թույլ կողմեր**-Պլանավորման ժամանակ, երբ հաշվի չի առնվում շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, բացառվում ՝ այլընտրանքային կարծիքի առկայությունը:
- **Ուժեղ կողմ-** Հաստատության առկա նյութատեխնիկական ռեսուրսների բազայի ընդլայնումը, նպատակային և արդյունավետ բաշխումը համագործակցային աշխատանքի արդյունք է:

**Թույլ կողմեր**- Սահմանափակ հնարավորություններն ու միջոցները , ռեսուրսների բազայի թերությունն ու անկատար լինելը կարող են կաթվածահար անել նույնիսկ լավագույն ծրագրի իրականացումը:

- **Ուժեղ կողմ**- **Համատեղ որոշումների կայացումը** ապահովում է ուսումնական հաստատության տեղեկատվության ճշգրիտ վերլուծությունը և արդյունավետ գործունեությունը:

**Թույլ կողմեր**- Հնարավոր է բազմակարծության պայմաններում չապահովվի բոլոր շահագրգիռ կողմերի սպասվելիք կարիքի բավարարում:

- **Ուժեղ կողմ- Ինքնավարության առկայությունը**՝ աշխատանքի առանձին ոլորտների վերահսկողության պատվիրակումը թիմի անդամներին ապահովում է բարձր արդյունավետություն:

**Թույլ կողմեր**- Մասնագիտական վարպետության պակասությունը , ավելորդ հավակնությունները հանգեցնում են աշխատանքի արդյունավետության անկման :

- **Ուժեղ կողմ** - **Մասնակցային կառավարման** արդյունքում ձևավորվել է աշխատակազմի առաջնորդական մղումները: Մասնակցային կառավարումը արդյունավետ է հատկապես երկարաժամկետ թիմային ծրագրերի իրականացման ժամանակ:

**Թույլ կողմեր**-Երբեմն կառավարման ավտորիտար, միահեծան ոճը անբավարար ներգրավվածություն ու շահագրգռություն է առաջացնում , արդյունքում հանգեցնելով ոչ համակողմանի , ոչ լիարժեք կարիքի գնահատում և որոշման կայացում :

Կառավարման խորհրդի և դպրոցի տնօրենի համագործակցության օպտիմալ արդյունավետություն ապահովելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն հատկացնել կարիքներին, թույլ կողմերին: Պետք է դպրոցի ռազմավարական զարգացման ծրագրի հիմքում դնել պլանավորման, կանխատեսման-կանխորոշման և կառավարման մարմնի հետ համագործակցության բարձր մակարդակը, թիրախների սահմանման և իրականացման միասնությունը, երկարաժամկետ, կարճաժամկետ պլանավորման միասնությունը, համակողմանի լինելը:

2.5 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների , շահառու կազմակերպությունների հետ (Վերլուծությունը ամբողջական է , ներառում է համագործակցող բոլոր կողմերը, դպրոց-համայնք կապերը, դպրոցի հանրային ընկալմանն ու հեղինակությանը, արտադպրոցական և երկարօրյա ուսուցմանն առնչվող հարցեր, և նպաստում է դպրոցի զարգացման ծրագրային դրույթների մշակմանը):

**Վերլուծությունը համագործակցող բոլոր կողմերի՝ ՏԻՄ –ի, ծնողական համայնքի , կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների միջև կներկայացնեմ ուսումնասիրած առկա ուժեղ կողմ և թույլ կողմ՝ կարիքի համատեքստում:**

- **Ուժեղ կողմ -Դպրոց –համայնք**- Ըստ բովանդակության համայնքի հետ կապը իրականացվում է հասարակական, աշխատանքային, ժամանցային, ճանաչողական , հայրենասիրական բնույթի: Համագործակցությունը բերում է կենսական կարևոր շփում, աջակցություն և համայնքը ներգրավվում է դպրոցական գործունեության մեջ:

**Թույլ կողմեր**- Անվերահսկելի իրավիճակներ, կախված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից , ռիսկային շփումներ , որոնք կարող են արտացոլվել անցանկալի տեսանկյունից:

- **Ուժեղ կողմ –Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի մասին հանրային ընկալում և հեղինակություն**- վերլուծությունը կարելի է ներկայացնել **սոցիալական** (օր. Դպրոցը ունի է բարի համբավ հասարակության մեջ ), **հոգեբանական** (օր. դպրոցի հեղինակությունը պատճառ է դառնում ծնողի համար դպրոցի ընտրության ժամանակ ) , **մասնագիտական առավելությունների** (օր. դպրոցի կառավարման դրական փորձը, բարձր որակավորում ունեցող ուսուցիչների աշխատանքային գործունեությունը) և այլ տեսանկյուններից:
  **Թույլ կողմեր**-· Դպրոցի հեղինակության բարձրացման համար անհրաժեշտ է անբասիր նվիրում, շատ աշխատանք, լավագույն կադրերի ընտրություն, ապահովել բարձր պատասխանատվություն անձնակազմի և սովորողների մոտ և կատարել հետևողական վերահսկողություն:
- **Ուժեղ կողմ- Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման** վերլուծություն- Պարտադիր դասընթացի հետ զուգահեռ իրականացվում են արտադպրոցական և երկարօրյա խմբակներ, որոնք ունեն կրթական , գործնական, զարգացնող, ճանաչողական նշանակություն և աջակցում են նոր չափորոշչային պահանջների և կարողունակությունների ձևավորմանը: Ապահովվում են սովորողների նպատակային և անվտանգ զբաղվածությունը դասերից հետո: Սովորողին

դարձնում են ճկուն, հարմարվելու, խնդիրներ հաղթահարելու, ինքնակրթվելու ընդունակ, նպատակասլաց , ստեղծագործելու ունակ անձ: Երկարօրյա ուսուցման նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը ունի նաև ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու նպատակ:

**Թույլ կողմեր**- Սովորողների մոտ մոտիվացիայի պակաս, ծուլությունը հաղթահարելու բացակայություն, սովորելու նկատմամբ անտարբերություն, խմբակներին ցածր մասնակցություն: Ուսուցիչների մոտ՝ հետաքրքրություն առաջացնելու վարպետության պակաս, ստեղծագործական –մասնագիտական հմտությունների բացակայություն , անտարբերություն և այլ պատճառների առկայություն, որոնց լուծման համար պետք է կիրառվի հատուկ մշակված ռազմավարական մոտեցում:

- **Ուժեղ կողմ -Կրթության կառավարման մարմինների հետ** համագործակցությունը: Ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկություններից մեկը կրթության պետական կառավարման անցումն է պետական-հանրային կառավարման: Որի հիմնական գաղափարն է համատեղել պետության և հասարակության ջանքերը կրթական խնդիրների լուծման գործում: Նաև կրթության կառավարման մարմինները իրականացնում են վերահսկիչ դեր, ամբողջացնելով աջակցություն- հսկողություն կապի ապահովման օղակը:

**Թույլ կողմեր**- Միայն վերահսկիչ գործառույթի և թերությունների արծարծման հիման վրա գործող հարաբերությունները կբերեն անվստահության և անարդյունավետության:

- **Ուժեղ կողմ- Մանկավարժական խորհուրդ, մեթոդական միավորումներ**--համագործակցության արդյունքում կատարվում է դպրոցի կանոնադրությամբ և ՀՀ Կառավարության 2 փետրվարի 2023 թվականի 2 N 137-Ն որոշման ՄԽ և ՄՄ գործառույթների իրականացում, կատարվում են նախատեսված բոլոր աշխատանքները, քննարկում և վեր են հանում առկա խնդիրները, տալիս են դրանց լուծման եղանակներ, կատարում են որոշումներ: Մշտապես ուշադրության կենտրոնում են պահում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին վերաբերող հարցերը:

**Թույլ կողմեր**- ՌԻսուցիչների համագործակցության ստանդարտ մոտեցումները , ձևական բնույթը, նախաձեռնողականության պակասը:

- **Ծնողական համայնքի** հետ համագործակցության վերլուծություն- Ծնողական համայնքի հետ կապը իրականացվում է ժողովների, խորհրդատվության , հանդիպումների, բաց դասերի, արտադպրոցական միջոցառումների տեսքով: Ծնողական համայնքը ներգրավված է թե ուսումնական, թե դպրոցի կառավարման, և թե սովորողների հանգստի ու արտադպրոցական միջոցառումների կազմակերպման մեջ: Ծնողների արդյունավետ համագործակցությունը ուսուցչի և դպրոցի հետ բերում է երեխայի մոտ մոտիվացիայի մեծացման, հակասոցիալական վարքագծի կանխարգելման, առողջության նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորման:

**Թույլ կողմեր**- Ծնողների ներգրավվության ցածր մակարդակ, հատկապես բարձր դասարաններում սովորողների ծնողների մոտ, ծնողների զբաղվածության և այլ պատճառներով:

- **Ուժող կողմ- Շահառու կազմակերպությունների**, խմբերի հետ համագործակցության վերլուծություն- Դպրոցի և սոցիալական ծառայությունների, ԱԻՆ ծառայության , ԲՈՒՀ-երի և այլ ուսումնական հաստատությունների հետ : Ակտիվ համագործակցություն իրականացվում է ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի հետ, համագործակցություն, որոնք ունեն օգնելու , ազդեցության, կանխարգելման նպատակ , մասնագիտական կողմնորոշման նպատակ :

**Թույլ կողմեր-** Շահառու կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպման դժվարություններ:

- **Ուժեղ կողմ- Սովորողական խորհուրդ**- համագործակցությունը ապահովում է սովորողների բարձր մասնակցայնությունը դպրոցավարության մեջ: Այն մեծ նշանակություն ունի սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման և որոշումների կայացման ժամանակ:

**Թույլ կողմեր-** Սովորողների կողմից գործառույթի ոչ լիարժեք գիտակցում, տեղեկացված լինելու, նախաձեռնողականության պակաս:

Դպրոցի տնօրենի մասնակցային ղեկավարման կարևորումը ՝ ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու խմբերի միջև համագործակցության ամրապնդումը, կառավարման մասնակցային բնույթը, կարևոր է կրթության որակի բարձրացման համար, զարգացման ծրագրի արդյունավետ իրագործման համար:

## 2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները.

(Վերլուծությունը մանկավարժական աշխատողներին ներկայացվող որակավորման և պաշտոնական պարտականությունների պահանջների համատեքստում ամբողջական է:)

«ՀՀ Լոռու մարզի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց » ՊՈԱԿ -ի մանկավարժական համակազմի – մասնագիտական որակների վերլուծությունը .

- **Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում բոլոր** մանկավարժական աշխատողները ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, համապատասխան որակավորում- Մանկավարժական անձնակազմը բաղկացած է 23 մասնագետներից: Դպրոցում աշխատում են ժամանակակից պահանջներին տիրապետող , ազգային արժեքները կարևորող ուսուցիչներ:
  Ուսումնական հաստատության մանկավարժների մասնագիտական կարիքներն են՝ **մասնագիտական զարգացում, որակավորման բարձրացում:**
  **Անհրաժեշտ է** ինքնակրթության, ինքնազարգացման, խորացված ուսուցման վերապատրաստումների ստացման անհրաժեշտությունը: ՈՒսուցչների մասնագիտական զարգացման հայեցակարգում բացի մասնագիտական զարգացում ապահովելը , անհրաժեշտություններ են նաև՝ զարգացնել մանկավարժական կոմպետենտությունը, հուզական ճկունությունը և մանկավարժական կողմնորոշումը:
- **Առարկայական գիտելիքներ և տեղեկացվածություն**- Ուսումնական գործընթացը հաջողությամբ կազմակերպելու համար ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական որակներ՝ գիտելիքներ դասավանդվող առարկայի ոլորտում , կազմակերպման տեխնիկա, պրոֆեսիոնալիզմ, աշխատասիրություն, հաղորդակցվելու, շփման վարպետություն, նվիրվածություն , ստեղծագործելու ընդունակություն:

**Կարիքը կարող է լուծվել** հատուկ մոտիվացիոն աշխատանքների, համակարգված , նպատակային մոտեցման շնորհիվ: Ուսուցչին պետք է ուղղորդել դեպի նոր առարկայական գիտելիքներ ստանալուն, իրազեկ լինելու ոլորտային առաջընթացին: Կամավոր ատեստավորման մասնակցությունը, տարակարգերի դիմելու հանար նախատեսված աշխատանքները , գիտական կոնֆերանսների մասնակցությունը մասնագիտական զարգացում ապահովող քայլեր են:

**Կրթական ու տեխնոլոգիական նորարարություններին արագ արձագանքելու կարողություն**- Կարողությունը թույլ է տալիս լինել արդյունավետ և հաջողակ բոլոր ոլորտներում, իսկ կրթության ոլորտում անխուսափելի պայման է գիտելիք ստանալու ժամանակ:

**Կարիքը լուծվում է** նպատակային մոտեցմամբ , գործնական քայլերով կարողությունը զարգացնելու մոտիվացիոն աշխատանքների , փոխօգնության, համագործակցության արդյունքում:

**·Արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցելու կարողություն**- Հստակ և մտածված հաղորդակցությունը հաջող համագործակցության նախապայման է: Արդյունավետ հաղորդակցությունը պահանջում է ինքնագիտակցության բարձր մակարդակ: Լավ հաղորդակցությունը թույլ է տալիս համագործակցել, հաստատել վստահություն:

Աշխատակիցները պետք է հասկանան իրենց ուժեղ և թույլ կողմերը: Գիտակցեն, որ **համագործակցային կապերի ստեղծումը** հաղորդակցության և փոխգործակցության նպաստավոր միջավայր է:

• **Ներառականության ապահովման վարպետություն-** Դպրոցում Ներառականությունը արժևորող և սովորողների ուժեղ կողմերի վրա հիմնվող մշակույթ է ձևավորված: Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ 10 սովորողներ: Մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և տարբեր ծառայությունների հետ քննարկվում և կանխարգելիչ գործունեություն է ծավալվում բռնության և բուլինգի վերաբերյալ:

**Կարիքները լուծվում** են հմուտ մանկավարժական թիմի և անհրաժեշտ պայմանների առկայության միջոցով: Խնդիրների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված սեմինարների, խորհրդատվությունների, միջոցառումների իրականացում:

Նշված կարիքների վերլուծությունը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել և աջակցել մասնագիտական որակների զարգացումն ապահովելու համար միջոցառումների իրականացմանը:

Աղյուսակ 6  Ներկայացվում է  Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոցի ընդհանուր տվյալներ `

վերջին 3 տարիների համար

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| ՈՒսուցիչների ընդհանուր թիվը | 23 | 23 | 23 |
| Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը | 23 | 23 | 23 |
| Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը | 23 | 23 | 23 |
| Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը | | | |
| Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը | | 11 | 11 |
| Որպես ուսուցիչ վերապատրաստող վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող հաստատության ուսուցիչների թիվը | | 1 | 1 |
| Ուսուցիչների միջին տարիքը | 49 | 50 | 51 |
| Միջազգային ու հանրապետական պարբերականներում , հոդվածներ , մասնագիտական հրապարակումներ, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական , հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը | 7 | 8 | 8 |
| Դասավանդման աշակերտակենտրոն , մասնակցային , ինտերակտիվ մեթոդներին տիրապետող  և դրանք կիրառող ուսուցիչների | 23 | 23 | 23 |

| | | | |
|---|---|---|---|
| թիվը | | | |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ , այդ թվում համացանց կիրառող ուսուցիչների թիվը | 23 | 23 | 23 |
| Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը | 23 | 23 | 23 |
| Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվը | 29 օր | 145 օր | 98 օր |
| Ուստարվա ընթացքում անցկացվող բաց դասերի թիվը | | | |
| Ուստարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը | 8 | 10 | 19 |
| Ուստարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը | 5 | 3 | 10 |
| | | | |

**ՈՒսուցիչների ծանրաբեռնվածությունը 2023-24 թթ**

| Ուսուցիչ | Դասավանդած առարկաներ | ՈՒս. բեռնվա ծությունը |
|---|---|---|
| | | Միջին `11,5 |

| | | ժամ |
|---|---|---|
| 1 | Մաթեմատիկա,հանրահաշիվ,երկրաչափություն, ինֆորմատիկա,ԹԳՀԳ | 22 ժ |
| 2 | Մաթեմատիկա, հանրահաշիվ,երկրաչափություն | 11 ժ |
| 3 | Կենսաբանություն,բնություն | 12 ժ |
| 4 | Աշխարհագրություն | 8 ժ |
| 5 | Քիմիա | 6 ժ |
| 6 | Ֆիզիկա | 6 ժ |
| 7 | Տեխնոլոգիա | 8 ժ |
| 8 | Շախմատ | 5 ժ |
| 9 | Տեխնոլոգիա | 2 ժ |
| 10 | Մաթեմատիկա,երաժշտություն | 12 ժ |
| 11 | Դասվար | 13 ժ |
| 12 | Դասվար | 17ժ |
| 13 | Դասվար | 17 ժ |
| 14 | Դասվար | 22 ժ |
| 15 | ՆԶՊ | 2 ժ |
| 16 | Ֆիզկուլտուրա | 22 ժ |
| 17 | Հայոց եկեղեցու պատմություն | 3 ժ |
| 18 | Մայրենի լեզու,հայոց լեզու,գրականություն | 16 ժ |
| 19 | Հայոց լեզու,գրականություն | 12 ժ |
| 20 | Ռուսաց լեզու,գրականություն | 12 ժ |
| 21 | Ռուսաց լեզու | 8 ժ |
| 22 | Ռուսաց լեզու ,գրականություն | 3 ժ |
| 23 | Անգլերեն լեզու | 16 ժ |
| 24 | Պատմություն,հասարակագիտություն,իմ հայրենիք | 19 ժ |

## 2.7 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը.

(Վերլուծությունը ամբողջական է ընդգրկում է կրթական ծրագրերի իրականացման բոլոր ուղղությունները՝ կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ , վարչատնտեսական գործունեություն):

**Դպրոցի կառավարման գործունեության մեջ ՏՀՏ և կրթական տեխնոլոգիաների ու նորարարությունների վերլուծությունը:**

- **Ուժեղ կողմ** -Որոշումների կայացման մեջ գործիք է համարվում ՏՀՏ համակարգը: Այն իրականացնում է տեղեկատվական , փոխակերպման, կառավարման գործառույթներ: Մշտադիտարկումը թույլ է տալիս որոշել, թե որքանով է արդյունավետ վերահսկող ազդեցությունը, վարչական գործընթացի արդյունավետությունը:

**Թույլ կողմ-** Տեխնիկական խնդիրներ, ՏՀՏ անհասանելիություն , մասնագիտական խնդիրներ, ոչ բավարար համակարգչային տեխնիկայի առկայություն:

**Անհրաժեշտ է** ֆինանսական ռեսուրսների հատկացում ոլորտի մասնագիտական և նյութատեխնիկական խնդիրները լուծելու համար, ենթակառուցվածքի մոդեռնացման ու նորացման համար::

- **Ուժեղ կողմ** -ՏՀՏ համակարգը ապահովում է մշտադիտարկման գործառույթներ : ՏՀՏ կիրառումը կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության ընթացքում ապահովում է գործունեության արդյունավետություն:

**Թույլ կողմ ՝** Արագ և էֆեկտիվ արձագանքման , ամենօրյա, հետևողական աշխատանքի անհրաժեշտություն: Անհրաժեշտ է անխափան , ծրագրավորված աշխատանքի կազմակերպում:

Կապի և տեխնոլոգիաների ժամանակակից միջոցների կիրառումը լրացուցիչ ռեսուրս է տնօրենի և կառավարման մյուս անդամների համար:

**Ուժեղ կողմ - Տվյալների ներկայացում միասնական և դյուրին ձևաչափով:**

**Կարիքներ ՝** արագ արձագանքելու հմտություններ, մատչելի գործիքակազմի ընտրություն:

Անհրաժեշտ է աջակցել հաստատության աշխատուժի տեխնոլոգիական մասնագիտական կարիքներին: Հասանելիություն ապահովել էլեկտրոնային փոստի , այլ կապի հավելվածների համար:

**Ուժեղ կողմ - Ստացած տեղեկատվության վերաօգտագործում և թարմացում**: Կրթական էլեկտրոնային հարթակների և ՌԻԿՀ –ի ինտեգրում և գործարկում:

**Թույլ կողմ** - անձնական տվյալների անվտանգության ապահովման վտանգ, ոչ նպաստավոր հասանելիություն տեղեկատվություններին:

Անհրաժեշտ է ապահովել կրթական ռեսուրսների հասանելիություն, անվտանգ տեղեկատվական պահոցի ապահովում:

Նշված կարիքների լուծումը ռազմավարական նշանակություն ունի դպրոցի կառավարման մեջ: Ճիշտ պլանավորումը, ռեսուրսների բազայի վերազինումը, մասնագիտական աճի ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրումը սահուն ու վերընթաց զարգացում է ակնկալում ուսումնական հաստատության համար:

**Դպրոցում կրթության մեջ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հիմնական դիդակտիկ պահանջները անվերապահորեն կապված են ուսումնադաստիարակչական գործընթացի հետ: Ներկայացնում եմ սումնադաստիարակչական գործընթացի և նորագույն տեխնոլոգիաների միջև եղած կապի վերլուծությունը**

- **Կարողությունների, հմտությունների զարգացում:**

**Կարիք**՝ Ձերբազատվել դասարանում ավանդական մեթոդներից , ինտերակտիվ դասերի խթանման միջոցով: Օգնել ՏՀՏ կարողությունների զարգացմանը, ապահովել անհրաժեշտ հմտությունների դրսևորման համար:

- **Կատարվում է վերահսկում սովորողների հաճախումների , գնահատման հետ կապված:**
  **Կարիք** ՝ Անմիջական վերահսկում և կապի ապահովում ծնողների հետ հաղորդակցվելու համար: Ծնողները կարող են տեղյակ լինել երեխայի դասարանում ունեցած ակտիվության մասին:
- **Կատարվում է** տնային հանձնարարությունների, գործնական և այլ աշխատանքների կատարում ՏՀՏ միջոցներով: ՏՀՏ միջոցները օգնում են հետազոտական աշխատանքների և այլ աշխատանքների արդյունավետ կատարումը տվյալների հասանելիության պայմաններում:

**Կարիք** `Անհավասարաչափ տեխնիկական բաշխվածություն: Անբավարար տեխնիկական միջոցներ: Անհրաժեշտ է տեխնիկական աջակցություն: Խրախուսելի է էլեկտրոնային դասագրքի օգտագործումը , որը հասանելի է ամենուր:

- **Տարբեր ուսումնական նյութեր օգտագործելու մոտիվացիա** : Բազմալեզու կրթական ռեսուրսներից օգտվելը , տարբեր կրթական ծրագրերի մասնակցությունն ու իրականացումը ուսուցիչների համար անձնական զարգացման և լավ դասեր վարելու երաշխիք են:

  **Կարիք**` աշխատանքային հմտությունների պակաս: Անհրաժեշտ է շարունակական մասնագիտական զարգացում մեթոդական աջակցություն :

  - **ՏՀՏ –ի օգտագործումը** ներառական կրթության , հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մեջ: Էլեկտրոնային կրթական ռեսուրսների և համակարգչային ուսումնական միջոցների օգտագործման դերի, տեղի, նպատակի և ժամանակի հստակ սահմանում:

  **Կարիք**` Թվային գրագիտության պակաս: Անհրաժեշտ է զարգացնել հմտությունները սովորողների շրջանում:

  - **Ուսուցչի առաջատար դերը դասերի անցկացման գործում**: Համակարգչային ուսուցման մեթոդոլոգիայի համապատասխանությունը դասընթացի անցկացման ռազմավարությանը:

**Կարիքը**` վերապատրաստման հետ կապված խնդիրներ: Համապատասխան գիտելիքներ ունեցող ուսուցիչների բացակայություն:

- **Անհատական զարգացման ընթացքում կայուն հետադարձ կապի անհրաժեշտություն:** Արդյունավետության ապահովում:

Նշված կարիքների ճիշտ գնահատումը և լուծումը ունի ռազմավարական նշանակություն դպրոցի զարգաման ծրագիրը իրագործելիս: Այն կապահովի ուսումնադաստիարակչական աշխատանքների և ՏՀՏ միջոցների, տեխնոլոգիական կրթական գործիքների ինտեգրման հաջողությունը: Ինտեգրումը կարևոր է աշխատող անձնակազմին տանելու դեպի նոր ՀՊՉ –ի պահանջների ապահովման:

**Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ինտեգրումը դպրոցի վարչատնտեսական գործընթացում** , կներկայացնեմ վերլուծությունը `

**Ուժեղ կողմ- *Համակարգչային տեխնոլոգիայի կիրառումը*** , որպես վերահսկողության , ուղղման , թեստավորման, ախտորոշման գործընթացների ավտոմատացման միջոց:

**Կարիք՝** ՏՀՏ –ի ներդնումը օպերատիվ կառավարման և տեղեկատվության արխիվային պահպանման համար:

**Ուժեղ կողմ --Վարչական և տնտեսական գործունեության ավտոմատացում**:

**Կարիք** ՝ Վարչական և տնտեսական ոլորտների փաստաթղթերի ուսումնասիրություն, վիճակի բարելավում:

**Ուժեղ կողմ** -Ֆինանսական կառավարման ծրագրերի առկայություն՝ բյուջետային պլանավորման , հաշվապահական հաշվառման իրականացում, առցանց վճարումների իրականացում :

**Կարիք՝** Իրականացնել ֆինանսական վերահսկողություն ֆինանսական գործարքների, առցանց գնումների, հայտարարված մրցույթների և դրանց արդյունքների մասին, ապահովելով թափանցիկություն:

**Ուժեղ կողմ- Էլեկտրոնային փաստաթղթերի կառավարում:**

**Կարիք՝** վարչական գործընթացի փաստաթղթային էլեկտրոնային կառավարման անհրաժեշտություն: Այն կհանգեցնի աշխատանքի մեջ արագության , արդյունավետության, տեսանելիության և հուսալիության:

**Ուժեղ կողմ - Ուսումնական հաստատության վիճակագրական տվյալների ավտոմատացում** ՝ կրթության որակը վերահսկելու համար:

**Կարիք** ՝ ՏՀՏ միջոցներով փոխանցված հաշվետվության ձևերի արագ և ժամանակին թարմացում, տվյալների փոխանակման արագության բարձրացում , ուսուցչի կատարողականի ուսումնասիրություն: Պետք է նվազեցնել կրկնօրինակման հնարավորությունը, աշխատատար գործողությունները:

**Կարիք՝ Դպրոցական մեդիագրադարանի ֆոնդի աշխատանքների կազմակերպումն ու զարգացումը:**

Ստեղծել մեդիագրադարան, որը հարուստ կլինի ուսումնական, գիտահանրամատչելի , տեղեկատու, դիդակտիկ և այլ ռեսուրսներով: Անհրաժեշտ է տեխնոլոգիապես հարստացնել դպրոցի գրադարանը:

**Ուժեղ կողմ- Համակարգչի և տեղեկատվական տեխնոլոգիաների այլ ժամանակակից միջոցների դիտարկումը որպես ուսումնասիրության առարկա:**

**Կարիք** ՝ Բարձրացնել սովորողների և աշխատող անձնակազմի ՏՀՏ գրագիտության մակարդակը, տեխնոլոգիացնել հետազոտական, տեղեկատվական, ուսումնառության, վերահսկողության, կառավարչական գործառույթները:

**Նշված կարիքների լուծումը տեխնոլոգիական ենթակառուցվածքում կապահովի վարչատնտեսական գործընթացի սահուն և արդյունավետ աշխատանքը: Անհրաժեշտ է օբյեկտիվ գնահատել և օպտիմալ մեխանիզմ ընտրել ՏՀՏ կիրառմամբ անխափան, անվտանգ վարչարարություն, գործավարություն, ֆինանսական կառավարում իրականացնելու համար:**

## 2.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը.

**(Վերլուծությունը ամբողջական է, համակողմանի , օգտագործված են որակի չափման տարբեր գործիքներ , հստակ ցուցանիշներ և գնահատված է որակի դինամիկան):**

Դպրոցի կրթության որակի գնահատումը պահանջում է ներքին և արտաքին գնահատման , պետական ատեստավորման միասնական մոտեցումներ, կներկայացնեմ վերլուծությունը՝

- **Ուժեղ կողմ** Սովորողների անհատական կրթական և արտադասարանական ձեռքբերումների գնահատում: Դպրոցը ապահովում է դասավանդման արդյունավետ միջոցներ, մեթոդներ: Իրականացնում է արտադասարանական ծրագրեր, երկարօրյա ծրագիր, մեծ տեղ է տալիս աշակերտակենտրոն ուսուցմանը, ապահովում է ներառական կրթության իրականացումը: Կիրառում է գնահատման արդյունավետ եղանակներ:

Կարիք՝ Անհրաժեշտ է կատարել սովորողների կրթական ծրագրերի յուրացման անհատական գրանցում, առաջադիմության շարունակական մշտադիտարկում, իրականացնել մրցույթների, օլիմպիադաների , առաջնությունների արդյունքների անհատական հաշվառում: Ապահովել նաև ինքնագնահատման ընթացակարգերի անցկացումը: Մշակել անհատական համակարգ սովորել չցանկացող, անտարբեր ու անհաղորդ սովորողներին ներգրավելու համար:

**Ուժեղ կողմ-** Աշխատակազմի մասնագիտական գործունեության արդյունքների գնահատում: Բարձրագույն մանկավարժական համապատասխան կրթություն ունեցող մասնագետների առկայություն, ովքեր մասնակցել են նոր ՀՊՉ վերապատրաստումներին :

Կարիք՝ Աշխատակազմի մասնագիտական շարունակական մակարդակի բարձրացում: Կրթական ծառայությունների որակի անհամապատասխանությունների բացահայտում և կանխարգելում: Կամավոր ատեստավորման մասնակցության, տարակարգի դիմելու ցանկության բացակայություն:

**Ուժեղ կողմ**- Կրթական հաստատության գործունեության որակի գնահատում: Այն ներառում է հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի բաղադրիչներ, դասերի որակը , անհատական աշխատանքը, արտադասարանական գործունեությունը, ծնողական համայնքի հետ կապը և գնահատումը:

Կարիք՝ Արտադասարանական գործունեության սահմանափակություն, սովորողների անհետաքրքրասիրություն, անտարբերություն, ծնողների անհետևողականություն:

**Ուժեղ կողմ** - Յուրաքանչյուր մակարդակում կրթության որակի գնահատում՝ արդյունքի որակ, պայմանների որակ և գործընթացի որակ: Գնահատումը վերաբերում է կրթական գործընթացն ապահովող պայմանների որակին: Այն ներառում է նյութատեխնիկական միջոցները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, սանիտարահիգիենիկ և գեղագիտական պայմանները, բժշկական աջակցությունը և սննդի ապահովումը, հոգեբանական և մասնագիտական նպաստավոր կարգավիճակը:

Կարիք՝ Ուսումնական ռեսուրսների համալրում , հագեցում և արդիականացում: Պայմանների բարելավում, հարմարեցում ԿԱՊԿՈՒ պահանջներին, ապահովել օգտակար և անհրաժեշտ սննդի հասանելիությունը, ապահով և անվտանգ կրթական միջավայրը:

**Դպրոցում կրթության որակի գնահատումը համակարգելու և ռազմավարական կարևորություն տալու անհրաժեշտություն կա: Ուսման որակի անկումը բացառելու համար անհրաժեշտ է վերհանել և հստակ լուծում տալ վերոնշյալ կարիքները: Իսկ շարունակական զարգացում և աճ ապահովելու համար անհրաժեշտ է թիմային համակարգված , հետևողական աշխատանք , ներառելով նաև խորհրդակցական մարմինների , համայնքի ներուժը :**

**2.9 Բազմակարծիք, ներառական , մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն**. (Ներկայացված է վերլուծություն, որում առկա է ամբողջական անդրադարձ բազմակարծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորման , սովորողների կրթական , սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետությանը):

**Ուժեղ կողմ** - Հումանիզացիա - Ուսումնական հաստատությունում բարձր մակարդակի վրա է դրված մարդկային հարաբերությունները կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար:

Կարիք՝ Կատարել դպրոցի ուսումնական գործընթացի վերափոխում հիմնված և' սովորողի ,և' ուսուցչի անհատականության, որպես կյանքի բարձրագույն արժեք ճանաչելու վրա: Ապահովել բազմակարծիք ներառական մասնակցություն, նպատակի գիտակցում և արժևորում կրթական բոլոր բնագավառներում: ՈՒսումնական հաստատության մասնակցային արժեքային միջավայրի ստեղծման նպատակներից է մարդասիրական անհատականության զարգացումը , նրա արժանապատվության , իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

**Ուժեղ կողմ** - Կրթական գործընթացի զարգացող բնույթ սովորողի անհատականության , աշակերտակենտրոն բնույթի և ներառական ու մասնակցային արժեքային միջավայրի ձևավորման մեջ:

Կարիք՝ Անհրաժեշտ է հիմնվել սովորողի անհատականության վրա , ապահովել կրթական ներառումը, կարծիքի գնահատելը , մտավոր զարգացման թիրախ առաջադրելը նրանց մտածելակերպի և գործելու ձևերին տիրապետելու միջոցով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ուսուցման բնույթը պետք է լինի ավելի արագ , քան ընդհանուր զարգացման տեմպերը, հետևաբար վերոնշյալ արժեքային միջավայրի ստեղծումն ու կիրառումը պետք է լինի առաջնահերթություն գործընթացի մեջ:

**Ուժեղ կողմ-** Կրթության տարբերակում և անհատականացում:

Կարիք՝ Ապահովել սովորողի զարգացումը նրա ունակություններին, հակումներին, հետաքրքրություններին և հնարավորություններին համապատասխան: Անհրաժեշտ է սովորողներին ներառել որոշումների կայացման մեջ, ապահովել խորհրդատվական և աջակցությունների իրականացումը :

**Ուժեղ կողմ-** Կրթության ժողովրդավարացում ՝ Իրագործվում է սովորողների, ուսուցիչների , ծնողների , համայնքի կրթական ընտրության ապահովումը և մասնակցությունը ուսումնական հաստատության գործունեության մեջ: :

Կարիք՝ Ժողովրդական առաջնորդության ոճի հաստատում: Անհրաժեշտ է սովորողներին հնարավորություն տալ ընտրել իրենց զարգացման հետագիծը , մասնակցել դասարանի, դպրոցի , համայնքում հասարակական գործերի մասնակցմանը:

**Ուժեղ կողմ** -Անվտանգության և առողջության պահպանման միջոցառումներ – Գործում է առաջնահերթության իրավիճակ առողջության ու անվտանգության ապահովման նպատակով:

Կարիք՝ Հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար , սոցիալական նպաստավոր միջավայրի , պայմանների ապահովում: Անհրաժեշտ է սովորողի կյանքն ու առողջությունը , սոցիալական հարմարավետությունն ու ներառումը համարել մեծագույն արժեք և առաջնորդվել այդ գաղափարով:

**Ուժեղ կողմ** -Ապաքաղաքականացում- Հանրակրթական ուսումնական հաստատությունում չի թույլատրվում քաղաքական կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

Կարիք՝ սովորողների իրավունքների և ազատությունների համատեքստում կարևորել ՀՀ օրենսդրության պահանջները և անվերապահորեն հետևել դրանց կատարմանը:

Աղյուսակ 7 Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2022-2023 ուսումնական տարում

| Հիմնական | Սովորողների | Հիմնական առարկաներից | 4-րդ դասարանում |
|---|---|---|---|

| առարկաներ | թիվը | | տարեկան գնահատականների միջինը | | գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | |
|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ դաս. |
| Հայոց լեզու | 16 | 12 | 8 | 6 | 8,4 | 13,5 |
| Մաթեմատիկա | 16 | 12 | 8 | 6 | 8 | 11 |
| Անգլերեն | 16 | 2 | | | | 17 |
| Ռուսաց լեզու | 16 | 10 | | | | 13,2 |
| Հայոց պատմություն | | 12 | | 6 | | 14 |
| Կենսաբանություն | | 10 | | 6 | | 12 |
| Աշխարհագրություն | | 2 | | 8 | | 15 |
| Ֆիզկուլտ | 16 | 12 | 9 | 9 | | 9 |
| Ընդամենը | 80 | 72 | 25 | 54 | 16,4 | 105 |

Աղյուսակ 8 . Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ:

2021-2022 ուսումնական տարի

| Քննական առարկաներ | Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների | |
|---|---|---|
| | Քննությունների միջին միավորների աճի | Քննությունների միջին միավորների |

| | տոկոսը | | նվազման տոկոսը | |
|---|---|---|---|---|
| | 4-րդ դասարան | 9-րդ դասարան | 4-րդ դասարան | 9-րդ դասարան |
| Հայոց լեզու | | | 5% | 4% |
| Մաթեմատիկա | | 17 % | 12% | |
| Ռուսաց լեզու | | 9 % | | |
| Անգլերեն | | 15 % | | |
| Հայոց պատմություն | | 7 % | | |
| Կենսաբանություն | | 8% | | |
| Աշխարհագրություն | | 0,7 % | | |
| Ֆիզկուլտուրա | | 2 % | | |
| Ընդամենը | 27 % | 59 % | 17 % | 4 % |

Աղյուսակ 9 Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուսումնական տարիների համար՝ ըստ կրթական աստիճանների։

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | | 2020-2021 ուստարի | | 2021-2022 ուստարի | |
|---|---|---|---|---|---|---|
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը .տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 17 աշ<br><br>29% | 10 աշ<br><br>1% | 14 աշ<br><br>23% | 10 աշ<br><br>13% | 11 աշ<br><br>18% | 10 աշ<br><br>11% |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը . տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ) | 30 աշ<br><br>50% | 75 աշ<br><br>72 % | 48աշ<br><br>80 % | 51աշ<br><br>65% | 24աշ<br><br>40 % | 65աշ<br><br>71% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ավարտման գործակից ՝ըստ կրթական աստիճանների (հաշվարկ.տարրական,հիմնական դպրոցի ավարտական դասարաններում քննություններից դրական տարեկան գնահատական ստացածների հարաբերությունը նույն դասարանների սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 13աշ<br><br>100 % | 32աշ<br><br>100% | 16աշ<br><br>100% | 12աշ<br><br>100% | 14աշ<br><br>100% | 17աշ<br><br>100% |
| Երկտարեցների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկ. տվյալ կրթական աստիճանում երկտարեցների թվի հարաբերությունը նույն կրթական աստիճանում սովորողների ընդհանութ թվին ՝ տոկոսային արտահայտմամբ ) | | 2աշ<br><br>17% | | | | |
| Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական արհեստագործական և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. հիմնական դպրոցի շրջանավարտներից նախնական և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թվի հարաբերությունը 9-րդ դասարանի սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | | 2019-20թթ<br><br>26աշ<br><br>81% | | 2020-21թթ<br><br>5աշ<br><br>42% | | 2020-21թթ<br><br>9աշ<br><br>53% |
| Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը ,որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում ուսումը շարունակողների թվի հարաբերությունը 9-րդ դասարանի սովորողների ընդհանուր թվին ՝տոկոսային հարաբերությամբ ) | | 2019-20թթ<br><br>6աշ<br><br>19% | | 2020-21թթ<br><br>7աշ<br><br>58% | | 2021-22թթ<br><br>8աշ<br><br>47% |
| Սովորողների բացակայությունների թիվը ժամերով ՝ ըստ կրթական աստիճանների, հաշվարկ . հաստատության տվյալ կրտական աստիճանի բոլոր դասարանների դասամատյաններում գրանցվածբացակայությունների գումարային թիվը արտահայտված ժամերով. | 2019-20թթ<br><br>693ժ | 2019-20թթ<br><br>2512ժ | 2019-20թթ<br><br>821ժ | 2020-21թթ<br><br>2115ժ | 2021-22թթ<br><br>975ժ | 2021-22թթ<br><br>2914ժ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Այլ հաստատություններ տեղափոխվածների թիվը | 7 | 1 | 1 | 2 | | |
| Այլ երկրների ուսումնական հաստատություններ տեղափոխվածների թիվը | 2 | 1 | 1 | 1 | | |

## 2 .10 Աշխատակազմի արժևորման , խրախուսման , ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը .

( Ներկայացված է վերլուծություն մանկավարժական աշխատողների մասնագիտական շարունակական զարգացման ինքնակրթության և վերապատրաստումների արդյունավետության մասին ,ինչպես նաև աշխատակազմի արժևորման և խրախուսման համակարգի վերլուծություն):

ՀՀ Լոռու Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոցի մանկավարժական անձնակազմի արժևորման, խրախուսման, ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը հնարավորություն կտա կատարել ճիշտ գնահատում և կատարել որոշումներ անձնակազմի շարունակական զարգացման ու մասնագիտական աճի համար:

**Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում աշխատում են 23 ուսուցիչներ: Մեկ ուսուցիչ կամավոր ատեստավորում է անցել և ստանում է հավելավճար:**

**Աղյուսակ 10** Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Ցուցանիշը | 2021-2022 ուստարի | 2022-2023ուստարի | 2023-24-ուստարի | փոփոխությունների դինամիկան՝ աճ կամ նվազում |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 23 | 23 | 23 | անփոփոխ |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 13,8 ժ<br><br>0,6 | 13,8ժ<br><br>0,6 | 12,6<br><br>0,6 | անփոփոխ |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը | | | 1 | |
| Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվ | | | 1 | |

Աղյուսակ 11 . Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 տարիների համար

| Ուսուցիչների թիվը | 2021-22 | 2022-23 | 2023-24 |
|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 1 | 1 | 1 |
| 31-40 տարեկան | 4 | 4 | 4 |
| 41 -50 տարեկան | 4 | 5 | 5 |
| 51-55 տարեկանից բարձր | 4 | 5 | 5 |
| 56-ից բարձր | 8 | 8 | 8 |
| | 21 | 23 | 23 |

**Վերլուծությունը թույլ կտա գնահատելու մանկավարժական աշխատողների մասնագիտական շարունակական զարգացման ինքնակրթության և վերապատրաստումների արդյունավետության մասին:**

**Ուժեղ կողմ Անձնակազմի մասնագիտական զարգացման մոտիվացիան ՝ որպես ուսումնական հաստատության արդյունավետության բարձրացման միջոց:**

**Կարիք՝** Սահմանել բարոյական և նյութական խթանների համակարգ ՝ ուուցիչներին բարձր արդյունավետության դրդելու համար: Անհրաժեշտ է կիրառել խթանման նյութական, բարոյական և հոգևոր , սոցիալական տեսակներ: Պետք է հաշվի առնել , որ մարդիկ դրդված են տարբեր գործոններով: Հաջողության գրավականը աշխատակիցներին տալն է այն , ինչ նրանք ցանկանում և ձգտում են իրենց գործառույթների շրջանակում: Մարդուն ինչ -որ բան ստիպելու միակ միջոցը նրան «ստիպելն» է , որ ինքը դա անելու ցանկություն ունենա:

**Ուժեղ կողմ - Վերապատրաստումների մասնակցություն և արդյունավետության ապահովման ձգտում::**

**Կարիք՝ Անհրաժեշտ է** բարձրացնել ուսուցիչների մասնագիտական հմտությունները: Մանկավարժական աշխատողները պետք է տիրապետեն նոր կրթական գործիքների և տեխնոլոգիաների, բարձրացնեն ստեղծագործական ունակությունները : Անհրաժեշտ է մշակել վերահսկողության պլան՝ ակադեմիական կարողությունների գնահատման համար: Պետք է ուղղորդել վերապատրաստումների, կատարել մշտադիտարկում : Հետադարձ կապը կատարել մրցույթների, օլիմպիադաների մասնակից սովորողների թվի գնահատման միջոցով:

**Ուժեղ կողմ** –Ֆինանսական միջոցների բաշխում- Վերապատրաստումները ապահովում են մասնագիտական ՝ մեթոդական , ակադեմիական, գործնական հմտությունների բարելավում: Պարտադիր վերապատրաստումների ֆինանսավորումը կատարվում է պետական միջոցների հաշվին: Պետությունը ապահովում է դպրոցի անձնակազմի մասնագիտական աճի մոդելի ներդնման ֆինանսական կողմը:

**Կարիք՝** լրացուցիչ ֆինանսական ներդրումների ապահովում վերապատրաստումների համար , բարձր կատարողական ապահովող ուսուցիչների պարգևատրման և քաջալերման համար, առարկայական դասասենյակների կահավորման և վերազինման համար, նորագույն տեխնոլոգիաներ և դրանց հավասարաչափ հասանելիություն ապահովելու համար, գրադարանային ֆոնդի հագեցման և պայմանների հարմարավետության համար: Անհրաժեշտ է բացի պետական բյուջեից

հատկացումներ փնտրել և ապահովել դպրոցի ֆինանսավորման աղբյուրների բազմազանություն: Օրինակ իրականացնել վճարովի կրթական ծառայություններ, գտնել արտաբյուջետային այլ միջոցներ:

Դպրոցի անձնակազմի գնահատման վերլուծությունը ցույց է տալիս . որ ուսուցիչներին անհրաժեշտ է համակարգված աջակցություն: Անհրաժեշտ է կիրառել մանկավարժական առաջադեմ փորձը , կատարելագործել տեսական գիտելիքներն ու կարողությունները: Աջակցությունը կարող է լինել մեթոդմիավորումների աշխատանքի ձևով, մենթորական աշխատանքը, ատեստավորման հանձնաժողովի աշխատանքը , վերապատրաստման դասընթացների մասնակցությունն ու ինքնակրթությունը:

## 2.11. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց արդյունավետության ցուցանիշների , շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից: ( Հիմնավոր կերպով ներկայացված է սովորողների և անձնակազմի թվի հարաբերակցության, ուսումնական և վերապատրաստումների նպատակով միջոցների պլանավորման , այդ ցուցանիշների շեղումների վերլուծությունը, ինչպես նաև ծախսված միջոցների ու առաջադիմության մակարդակի համեմատությունը ):

**2023-2024 ուսումնական տարում Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի ֆինանսավորումը կատարվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22 սեպտեմբերի 2022 N 1481-Ն որոշման: 2023-24 թթ ուստարվա սեպտեմբերին կազմել է 51 միլիոն 824,500դրամ: Նախորդ տարում եղել է 31 միլիոն 365000 դրամ:**

Աղյուսակ 12  2023թ. հունվար - օգոստոս ամիսների  և 2023թ սեպտեմբեր ամսվա  բյուջեն

| | 2023թ. հունվար - օգոստոս ամիսների բյուջեն | 2023թ. սեպտեմբերի  բյուջեն |
|---|---|---|
| **Ընդհանուր** | **31 միլիոն 365000 դրամ** | **51 միլիոն 824500 դրամ** |
| **Տարրական** | **16 միլիոն 780000 դրամ** | **25 միլիոն 602000 դրամ** |
| **Հիմնական** | **14 միլիոն 85000 դրամ** | **26 միլիոն 818300 դրամ** |
| | | |

2023-2024 ուստարվա տվյալներ

Աղյուսակ 13  Տվյալներ հաստատության բյուջետային հատկացումների վերաբերյալ

1-ին կիսամյակի ծախսերի վերաբերյալ

| | |
|---|---|
| Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը | |
| Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը | |
| Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը ՝ հաշվարկ . ծնողների կողմից տարվա կտրվածքով կատարած նեերդրումների ,դրամաշնորհների և հաստատության տարեկան բյուջեում | |
